

Թիմարա Թեկուրճ քաղֆորնացի մըն է, որ կգրե արձակ և ոտանավոր, հայերեն և անգլերեն, էմիլի Տիքընստընի պես, սիրտ, մոլորումի, հավատքի, ցավի հաճույքի և ցավոտ մտերմության մասին, պատկերավոր և պերճ լեզվով: Օր. Թաճիկյան հատվածներն առաջ բերելով անոր գրություններն կաշխատի վերլուծել անոր գրական կարողությունները:

Ան կխոսի նաև Զապել Պոյաճյանի մասին, որ ծանոթ է իբր նկարիչ և գրագետ և որուն գործերն կհիշվի «Հայ առասպելներ և վեպեր» (1916) և «Կիլիկիամեջ» (1924), որ

անկից ետքը գրած է հունական առասպելներու և գեղարվեստի մասին ուսումնասիրություն մը և «Էջմիածին» թատերգությունը:

Անշուշտ վերահիշյալ գրագետներն զատ կան Անգլիա, Ամերիկա և այլ անգլերեն խոսող երկիրներու մեջ ուրիշ գրագետներ, որոնք անգլերենին կատարելապես կտիրապետեն և հոգվածներ ու գիրքեր կգրեն:

Մեր ուշագրությունը մասնավորաբար կհրավիրեն այն հայ գրագետներն ու բանաստեղծները, որոնք միջազգային համբավ կվայելեն, Մայքլ Արլենի մը կամ Ուիլիըմ Մարոյանի մը նման:

(«Ժողովուրդի ձայն» թիվ. 1468)

ՕՆՆԻԿ ՊԵՐՊԵՐՅԱՆԻ ՆՎԱԳԱՆԱԴԵՍԸ

Օննիկ Պերպերյանի տարեկան նվագահանդեսները Փարիզահայ գաղութին համար, ի մասնավորի հայ արվեստի մշակման տեսակետեն, շահեկանություն ունեցող զեպք մըն են եղած միշտ: Արդարեւ, ազգային երաժշտական ոճի մը, կամ զպրոցի մը մարմին տալու նպատակը հետապնդող հայ երգահաններուն կարգին Օ. Պերպերյան, մինչև հիմա իր արտագրած լուրջ գործերուն շնորհիվ անտարակույս կարևոր դիրք մը կգրավե արդեն:

Ստեղծագործական կանոնավոր ուղեգծի մը հետեւելով, ան ասկե առաջ տվաւ, իբր սեմֆոնիք գործ, «Հերոսի կյանք»-ը, «Հայկական Համակագ»-ը, ինչպես նաև բոլիֆոնիք «Պատարագ»-ը, և այլն:

Հառաչիկա նոյեմբեր 30-ին Սալ Կավոյի մեջ իր գործերուն նվիրված նվագահանդեսին հալտագրին մաս կկազմե իր մեկ նոր և կարևոր հեղինակությունը՝ «Հայկական Քոնչերթո»-ն, գրված դաշնակի և նվագախմբի համար, ինչպես նաև նույն «Պատարագ»-ը, այս անգամ մեծ նվագախումբի համար վերատին աշխատասիրված ձևին տակ:

Սույն նվագահանդեսին կմասնակցին շնորհալի երգչուհի օր. Կարին Իշկալացյան (լորենադ Փարիզի քոնսերվատորան), հանրածանոթ դաշնակահար էմիլ Բասանի, վերսալի քուարթետը և Լամուրեո նվագախումբը:

(«Արևմուտ» 23 նոյեմբեր 1947 թ.)



Օ. Պերպերյան

ԱՅՑ ՍԸ Ս. ՂԱԶԱՐԻ ՎԱՆՔԻՆ՝ „ԲԱԶՄԱՎԷՊ“-Ի 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Վանքը, հոկտեմբերյան այս ամսուն է աշնանային խորունկ գույներու և մեջ, խորհրդավոր գեղեցկությունը զգեցած բույրերու կախարդանքին, զեռ կարմիր

վարդեր կան վանքի սպիտակ կամարներուն մոտիկը և թուշուններ՝ Պայրընի ձիթենիի ճյուղերուն մեջ:

Սրտագին ու սիրալիք ընդունելությունը կվայելեմ վանահոր՝ Գերապայծառ Սրապիոն Ուլուհաճյանի և վարդապետներուն, որոնց հետ կըրջեմ վանքին մեկ ծայրեն մյուսը: Ինչ ոգևոր խոսակցություն և բացատրություններ պատմական կամ ներկայի դրվագներով: Եկեղեցի, թանգարան, գրատուն, տպարան և դամբարանները կայացել են հետզհետե: Տպարանին հսկա մեքենաները հոծ ժխորով կլեցնեն շուրջը:

Մխիթարյան վարդապետներուն մեջ կան կատարյալ արվեստագետներ—բանաստեղծներ, երաժշտագետներ, գիտնականներ և ինչ որ զիս հրճվանքով կպարուրե, Հայրերր անխտիր հիացողներ են Խորհրդային Հայաստանի մշակութային ներկա վերելքին: Հայր Ղևոնդ Տալան Կոմիտաս վարդապետի նման կմշակե հայկական երաժշտությունը: Իր գլուտն է քառորդ ձայներու դրությունը: Քնյա փորձը,— կըսե ան,— պիտի ծառայե մեր ազգային երգերուն տալու իրենց առարկայական և իսկական արտահայտությունը, ինչպես կպահանջե բնիկ նկարագիրը արևելյան հին ազգերու երաժշտության: Հուզումով կլսեմ իր երգած «Եկալք Հուստացեալք»,—ը, ուր ան ներմուծած է արդեն իր գլուտը: Ցույց կուտա ձեռագիր շարականներու հսկա աշխատություն մը, որ շուտով լույս պիտի տեսնե վանքին տպարանին մեջ:

Հայր Ազգլյանի հետ կըրթաքանանք վանքին թանգարանը: Ահավասիկ հայկական զարդանկարչության, գորգագործության, զինագործության և մանրանկարչության հրաշալիքները, մասնավոր դարակներու, պահարաններու մեջ ճաշկով շարված: Հայկական սկիհներ, արծաթահյուս ուրար մը, գեղաքանդակ թագեր, մականներ, գոտիներ, սուրեր և այլն: Տարբեր պահարանի մը մեջ զետեղված են հախճապակիներ, որոնք հայերեն արձանագրություններ կըլըրեն, նույնպես սաղավարտ մը, որ պատկանած է հայ մարտիկի Քրիստոսե յոթը դար առաջ մոտավորապես: Հրաշալի են Նափոյեոն Ա-ի կնոջ՝ Մարի-Լուիզի պատկանած գոհարեղենները, զորս կայսրը փոխանակած է ունենալու համար հին հայկական սուրն մը:

Հայր Ազգլյան ուշադրություն կհրավիրե ձեռունի մեջ նկարին վրա, որ կներկայացնե «Խաղաղությունը և Արդարությունը», և գործն է հռչակավոր Քրեֆոլոյի:

Լորտ Պայրընի սենյակը տպավորիչ մթնոլորտ մը ունի: Քանի մը շաբաթ առաջ

անգլիական շարժանկարի ընկերություն մը եկած է լուսանկարելու և վերակոչելու համար «Հանճարեղ կաղ»-ին կյանքին ինչ ինչ դրվագները, զոր ան անցուցած է Ս. Ղազարուն վանքին մեջ: Վանքին պարտեզին մեջ տնկած է ձիթենի մը, որուն շուքին ան հաճախ եկած է երազել ու խորհրդածել՝ դիտելով ծալի կակունան կամ գեղածիծաղ լիտոն: Ծյուղ մը կփրցնեմ ձիթենիին, իբր «բախտ բերող», հետս տանելու համար:

Մխիթար Աբբահոր դահլիճը երթալե առաջ, հայր Ազգլյան ինծի կերկարե արձանագրության տոմարը, ուր կնշանակեմ անունս ու նաև «Բազմավեպ»-ի 100-ամյակի առթիվ հիշատակագրությունը: Նույն տոմարին մեջ ստորագրած են Ալֆրեստ տը Մյուսե, Պայրըն, Ռապինտրանտ Թակոր, իշխաններ և իշխանազուներ: Ահավասիկ Աբբահոր դահլիճը: Սրահին մեջտեղը հսկա դագաղ մը, որուն կմոտենամ երկյուղով թրջված հետաքրքրությամբ մը: Նգիպտական մումիա մըն է, որ 4000 տարին ի վեր կնշե նույն ձևով: Իր պատանքը կապույտ և սև ուլունքներով հյուսված հրաշալի ծածկույթ մըն է, ուր եգիպտագիր նախշված են այս երեսունհինգ տարեկան քուրմին կյանքին ու գործին վերաբերյալ դրվագները: Դարակ մը ևս ամբողջապես հատկացված է հին հայկական դրամներու:

Ու ահա հայկական ձեռագիրներու հրաշապատում գանձարանը: Երեք հազար հազավազուտ մատյաններ հոս են, ինչ որ հայ սիրտը, միտքը, ճաշակն ու համբերությունը սիրով ու երկյուղածությամբ կրցած են ըստեղծել, արտադրել, խնկաբույր աստվածաշունչներ, ավետարաններ, սաղմոսագրքեր, Ներսես Ծնորհալիեն, Լամբրոնացիեն ձեռագիր մասունքներ, Մլեք Թադուհիին ոսկեճամուկ ձեռագիր Աստուածաշունչը, աղոթարույր Նարեկ մը, թոշնագիր մանրանկարչության գլուխ գործոցներ: Կայսրեր, կայսրուհիներ, իշխանազուներ մասնավոր նրվերներով ճոխացուցած են թանգարանը: Մասնավոր սրահի մը մեջ տեղ գտած են ժամանակակից նկարիչներու գործերը: Հոն են Ալվազովսկին, Էտկար Շահինը, Շապանյան, Ադամյան, Մախոսյան, Շիլյան, Ֆեթիաճյան, Զ. Մութաֆյան, Խաչատուրյան և այլն:

Գրատունը կպարունակի հին թե նոր հայ հեղինակներու գիրքերը, 35 հազար հատոր ու բազմաթիվ հայերեն պարբերաթիթեր: Հսկա սնտուկներու մեջ զետեղված են «Բազմավեպ»-ի 100 տարվա պատկառելի թիվերը, որ նույն իրիկուն իսկ պետք է փոխադրվին վենետիկ, Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի սրահը, ցուցահանդեսի մը

համար, որ տեղի պիտի ունենա «Բազմավեպ»-ի հոբելյանական հանդեսին օրն իսկ:

Կիրակի 19 հոկտ. կեսօրն վերջ Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի շքեղազարդ դահլիճներում մեզ կսկսե «Բազմավեպ»-ի հարյուրամյակին նվիրված հանդեսը: Սրահը լեցված է հայ և իտալացի ընտրանիով: Հոն են արտասահմանեն հրավիրված ազգայիններ, հրապարակագիրներ, գրագետներ, արվեստագետներ և այլն. մեծ մասամբ Մուրատ-Ռաֆայելյան նախկին սաները և թերթերու ներկայացուցիչներ: Հայր Մեսրոպ Ճանալյան, «Բազմավեպ»-ի ներկա խմբագրագետը, կրանա հանդեսը: Ան խոսք կառնեն ու կբացատրեն «Բազմավեպ»-ի նշանակությունը:

Մոնսեննոր տը Լյուքա խաղերեն լեզվով ներբողականը ըրավ «Բազմավեպ»-ի ու հայն սնուցանող դարավոր հայ հանճարին:

Բանաստեղծ Հայր Վահան Հովհաննիսյան կուռ ճառով մը վեր հանեց թերթին խոր ազդեցությունը հայ մտավոր շարժումին վրա: Հայր Հ. Ոսկյան «Հանդէս Ամսօրեայ»-ի կողմն հարգանքի ու հիացումի տուրքը բերավ քույր պարբերաթերթին: Իտալացի լը-

վենտիկ, 1947 հոկտ.

րագրող Ժ. Վեննի իտալական մամուլին ողջույնները բերավ հոբելյանական հանդեսին: Հուզված ու ներշնչված շեշտերով խոսք առավ երիտասարդ բանաստեղծ Արամայիս Սրապյան, նախկին սան Մուրատ-Ռաֆայելյանի, դրվատելու համար հայ մամուլն ու անոր վաստակավոր ու անխոնջ մշակները:

Խնամված դեղարվեստական բաժնին իրենց մասնակցությունը բերած էին Օր. Մանի Պոտուրյան՝ երգ և դաշնակ, Պ. Միրակ Սաղըզյան՝ հայկական երգերով, Պ. Վ. Թոքաճյան՝ արտասանություն և իտալացի արվեստագետ Ս. Ամենտուլա՝ իր դաշնակի ընկերակցությունը:

Հանդեսը փակեց Ս. Ղազարու վանահայր Գեր. Ուլուհաճյան ընդհանուր խանդավառության և երկարատև ջերմ ծափերու մեջ:

Հանդիսականները առիթ ունեցան կից սրահներու մեջ ցուցադրված «Բազմավեպ»-ի հին թե նոր թիվերը թղթատելու և հիանալու համար նույնպես «Գեղունի»-ի ժիւրանափայլ ու շքեղ հատորներուն վրա, զոր Մխիթարյան հայրերը մասնավորապես հրատարակած են փառաբանելու համար «Բազմավեպ»-ի հարյուրամյա հոբելյանը:

ՄԱՌԻՒ ԱԹՄԱՃՅԱՆ

(«Ժողովուրդ» 9 նոյեմբ. 1947 թ.)

ՀԱՅԵՐԸ ՍՈՒՐԻՈ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍՈՒՐԻԱ, Ճեզիրեի նահանգը, որ ունի Գամբըլը, Հասիլե, Ռասյուկ-Այն, Տեր-Ձոր, Տերպեսիե ամանները, ընդամենը 12.500 հայ առաքելականներով: Ունի Առաջնորդական փոխանորդություն և ներկայիս Աթոռակալն է Հոգ. Տ. Մեսրոպ վարդ. Բարոյան, նույնպես միաբան Կիրիկիո Կաթողիկոսության և շրջանավարտ Անթիլիասից 1936-ին: Հյուսիսային Սուրիո շրջանին մեջ հայ կաթողիկոսները ևս ունեն Առաջնորդական փոխանորդություն, ուր նստում է Գերապայծառ Զոհրապետն Եպիսկոպոս:

Քեսուպի եվ ԼԱԹԱՔԻՈ ՇՐՋԱՆԸ, որ ունի Լաթաքիա քաղաքը, Քեսապը, Գարտուրանը, Եագուպիեն, Ղընեմիեն, Ճիսը էլ Նոուր, Մեյտան Էքպեզ, Թարթուս, Թեյ, Ապիատ, Թեյ Բոչեք, Թեյ Պրագ, Տերիք, Ընկղիթ՝ ավանները, ընդամենը շուրջ 6250 հայ առաքելականներով:

ԼԻԲԱՆԱՆ.—Հողային ավելի ամփոփ սահմանների մեջ հաստատված, և թեև թվականորեն նվազ հոծ քան Հալեպի հայությունը, բայց տնտեսականորեն և մանավանդ մշա-

կութային ազգային հաստատությանը տեսակետից ամենից կարևոր կեդրոնն է Լիբանանը: Մանավանդ պատերազմի այս վերջին տարիներին շատ հայեր գաղթեցին Հալեպի և Դամասկոսի շրջաններից և թերևս 1945 տարվա վախճանին Լիբանանի հայության թիվը նվազ չէ, քան Հալեպի թեմինը: Ունի եպիսկոպոսանիստ Առաջնորդարան:

Լիբանանի գլխավոր կեդրոնացումներն են հետևյալները.—

ԲՅՅՐՈՒԹ քաղաքը և իր արվարձանները, ուր ապրում են մոտ 60.000 հայեր: Բեյրութի Գետի շրջանը, որ սրանից 20-25 տարի առաջ ամայի էր, այսօր երկու կողմի վրա շենցած հայկական թաղերով կցված է ըստ Բեյրութ քաղաքին: Մանավանդ դեռից մյուս կողմը, զուտ հայկական թաղերով է շենցված: Այս հայկական արվարձանների գլխավորներն են,—Գետից դեպի Բեյրութ և քաղաքին անմիջապես կից, Նոր Հաճըն, Էշրեֆիե, Հայաշեն, Բըմեյլ, իսկ դեռի մյուս կողմը մեծագույն արվարձաններն են՝